

ՀԱՅ ԴՐՈՇՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. տես. 1919 թվ. էջ 67)

Ը. — ԱԶԳԱՑԻՆ ԴՐՈՇԸ. — Տոհմային վառերէն զատ՝ Հայաստան ունէր հասարակաց զործածական դրօշ մ'ալ. և էր քրիստոնէութեան նշանը, նմանողութեամբ միւս հաւատացեալ ազգաց՝ որոց մասին խօսեցայ աշխատութեանս սկիզբը: Մեծն Կոստանդինոս քրիստոնէացուց յաբարումը (labarum), որ ոսկեզօծ ձողի վրայ կը կրէր ծիրանի կտաւը, ոսկի ծոպով և խաչին ոսկեհիւս մենագրով. և զոր յաջորդ բիւզանդական կայսերը ալ պահեցին, ինչպէս ըսի՝ (Բզմվպ. 8): Բաց աստի՝ ասոնք աոին իբր նշան բուն խաչն ալ, Թանկագին մետաղէ յօրինուած ու զետեղուած բարձր ձողի մը ծայրը, որ կայսերաց առջևէն կը տարուէր փոխան դրօշի:

1. — Նոյն խաչն ի հնուց Հայոց բանակն ալ ունէր պատերազմաց մէջ, բայց վառի վրայ ձևացուցած: Վարդանանք երբ կը դիմէին ազատելու հայրենի ամրոցները Պարսից ձեռքէն, կանգնած զայն բանակին վերև, կամ ուրիշ բացատրութեամբ՝ «խաչանդան արարեալ ի վերայ զօրուն»՝ այնպէս կը յարձակէին, կ'ըսէ Յիշդէ (127): Ի հաստատութիւն իմ այս մեկնութեան՝ պատմիչս կը զգացնէ՝ թէ վարդանանք սոյն վառն իրենց հետ ունէին նաև Աղուանից օգնութեան գնալու ժամանակ, երբ անոնց աղօթել կու տայ այսպէս. «Յրուեա և վառնեա զչար միաբանութիւն թշնամեաց ճոց առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս» (անդ, 140): Այս դրօշն ուրեմն անպակաս էր բանակին մէջ, և առաւելապէս անհաւատից դէմ մղուած պատերազմաց առթիւ: Այս մասին հետաքրքրական է Դաւիթ Անյաղթի վկայութիւնն ալ,

որ ի ցոյց կը դնէ խաչին՝ այս ինքն խաչադրօշին մեծ կարևորութիւնը պատերազմի մէջ, կոչելով զայն «թագաւորաց յաղթանակ, իշխանաց յոյս քաջութեան, քրիստոսաւոր զօրաց յառաջապահնս, (որով կէմանանք՝ թէ բանակին առջևէն կը տանէին), ախոյանաց քաջաւերութիւն, նահատակաց զօրավիգն, վտանգելոց օգնական, պարտեցելոց ապաւէն»։ Ի դարուն՝ մամիկոնեան Գալի վահանայ համանուն թողին հետ պատերազմի կ'երթան 385 կրօնաւորներ, որոցմէ ամէն զոյգ բռնած էր մէկ մէկ «խաչադրօշ քարճարաւուն»։ Եւ ընդհարման պահուն «զնշան խաչին զարժուցանէին ի վերայ թշնամեացն»։ Յիշդէնք վերջապէս՝ թէ ժ դարուն թոժմամ արժուին խօսելով բազրատունի Սմբատ արքայի մասին, կ'ըսէ՝ թէ սովորութիւն էր «տալ (այս ինքն տանել) առաջի նորա նշանակա խաչադրօշս» (268): Եւ ուսկից կրնանք իմանալ՝ թէ նոյն վառը Բագրատունի արքայից առջևէն ալ կը տարուէր պատերազմէ դուրս՝ հանդիսական օրերուն:

Բաց աստի կը տարուէր բուն խաչն ալ դրօշի պաշտօնով, ինչպէս կը տեղեկացնէ Յովհաննէս պատմիչ, յիշելով Բ Աշոտոյ խաչը՝ «զոր սովորն էր միշտ առաջի իւր շրջեցուցանել» (5): Եւ միակ օրինակը չէ այս. Փրանկը, Գող վասիլ և Ապղարիպ իշխանք Հայոց՝ Ուռհայ քաղաքին օգնութեան երթալով Թուրքաց դէմ, «հանեալ բարձրացուցին զվարապալ սուրբ նշանն ի վերայ զեղարդեանն, և տանէին առաջի զօրացն» (Ուռհ. ՄԳ): Նոյնպէս Դ Լևոնի զօրքը 1302ին կոռի մը մէջ կը յարձակէր Արարաց դէմ,

1. Մենագրական նշանը մնաց անոնց դրօշին վրայ մինչև ցԺԲ դար, և ապա անդի առաւ նոր մեկնութիւն (Jacquemin, *Hist. générale du Costume*, էջ 17-18):

2. Դաւիթ Անյաղթ, Վնետիկ, 1883, էջ 117.

3. Յովհաննէս Մամիկոնեան, Վնետիկ, 1882, էջ 50.

«գնշան սրբոյ խաչին առաջի տանելով» (ի Սմբատ, ԶԻՐԱ)։

Յիշեալ վկայութեանց մէջ տեսանք խաչին ներկայութիւնը դրօշին վրայ, որոյ ձևին ալ ուշ դարձնելու ենք։ Մեռնագրական ըսի կոստանդնուսի դրօշին խաչածէր. և էր «Քրիստոս» անուան առաջին երկու յոյն գրերը՝ Χ և Ρ խառնուած իրարու . այս ինքն վերջինը նստած առաջնոյն վերին խոռոչին մէջ, և իւր բունն անոր կեդրոնէն կը կտրէր կ'անցնէր վար (Darem. Զ, 1321)։ Նոյնն ունէր երկրորդ ձև մ'ալ. Χ կանգնած խաչի ոճով, և վերին ծայրը Ρ տառին զխով աւարտած¹։ Նախ քան զկոստանդինոսս՝ երբ դեռ քրիստոնէութիւնն արհամարհուած ու հալածուած էր իւր նշանով հանդերձ, Եկեղեցին խոհմոութիւն համարեցաւ խաչին իսկական ձևը ծածկել յիշեալ մենագրին յարմարական ձևին ներքեւ, որ կար արդէն հեթանոսական շրջանէն՝ տարբեր նշանակութեամբ², և զոր քրիստոնէութիւնը վերածեց, միանգամայն կրկին ի մաստ ընծայելով անոր, Քրիստոսի և խաչի։ Կոստանդինոս երբ ուզեց խաչն ամբողջաբար իւր դրօշին վրայ, այդ մենագիրն իսկ գտաւ իւր աւելի գործածական, և զայն՝ վերոյիշեալ ձևոց առաջնով օրինականց իւր վրասն վրայ, զոր կանգնեց յաղթական ընդդէմ դիցապաշտութեան։ Այս հանդիսական գործով աւելի ևս նուիրականացաւ մենագիրն ամբողջ քրիստոնէայ աշխարհի մէջ։

Անոր կը հանդիպինք քանի մ'անգամ նաև Հայաստանի մէջ՝ մեր քրիստոնէութեան նախկին դարերուն, բայց միշտ զոյգ ձևերէն երկրորդով՝ որոյ վրայ աւելի ըզզալի էր տէրունական նշանը։ Զոր օրինակ վաղարշապատու կաթողիկէին պատին վրայ կայ այն՝ խառն Զուիթ, Տի-

բէր ու Գարեգին հայ անուններով և յուռնարէն գրչութեամբ, զոր Ստչիգովսկի կը համարի Ե կամ Զ դարու գործ³։ Դարածեալ մենագրական խաչը, յունարէն գրուած համար «Ներսէսի կաթողիկոսի», զոր նոյն հեղինակը Շինողը կը կարծէ, քանդակուած է վաղարշապատու մօտ գտուած չորս խոյակաց վրայ, զորս Զուարթնոց եկեղեցւոյն մասն կը համարի (էջ 9)։ Աւելին կայ. յոյն մենագիրս այնքան ընտանի և հաճելի էր Հայոց, որ Ս. Մեսրոպ զայն կնիք դրաւ նորագիտ հայ այբուբենին, որոյ մէկ մասն յունականէն էր։ Մեր Ք տառն է այն, որ հին արձանագրութեանց ու երկաթագիր գրչագրաց մէջ ունի երկար բուն մը, և խոտորնակ գիծը զխէն հեռի է և հաւասար թեքով՝ ինչպէս խաչը։ Քէին ձևը, աւելի նման յոյն քնագրին, ֆիաց այբուբենին յատուկ, մինչդեռ առուեստի մէջ նոյն մենագիրը զարգացաւ և այնպէս իշխեց։ Արդարև վաղարշապատու որմին ձևը, զոր աշխատութեանս հետ հրատարակուած դրօշին վրայ յառաջ բերած եմ, հայ արուեստաւորին մէկ քմահաճոյքը չէ։ Զայս կը տեսնենք յար և նման ու շատ տարածուած Ե-Զ դարուց ասորական եկեղեցեաց ու տանց վրայ եւ, որոց ձևերը հրատարակած է վիդուէ⁴, կը հետևի՝ որ նոյր մեր քով ալ ընտանի էր ու սովորական։ Եւ մեր և ասորական քանդակաց մէջ ընդհանրապէս շրջանակուած է։

Ուսկից էր Հայոց փարուսն այս մենագրին։ Բնականապէս նախագրիգորեան հայ քրիստոնէութեան մ'արդիւնքը չէր կրնար լինել այն։ Որով մեր միտքը ստիպեալ կը թռչի դէպ ի կոստանդնուսի մենագրակիր դրօշը, որ Հայոց ալ թելադրեց խաչանիշ վրասն գաղափարը զոր տեսանք. և զաղափարին հետ՝ հիմայ կրնանք համարձակօրէն ըսել՝ - նաև կոստանդնուս


1. Martigny, *Diction. des Antiquités chrét.* Paris, 1889, էջ 476-82. — Cabrol, *Diction. d'Archéol. Chrét.* Է. Ա, 1-23.

2. Vigouroux, *Diction. de la Bible*, Է. Բ, 1129.

3. Էրմիսթի Աշտարակ. Վիեննա, 1892, էջ 7.

4. De Vogüé, *Syrie Centrale*, Paris, 1865, աբ. 20, 33, 43, 46, 62, 127, 128.

նշանը: Եւ երբ Դաւիթ Անյաղթ՝ յետ Արշակունեաց անկման՝ տակաւին «Թաւառաց յաղթանակ» կը կոչէր խաչադրօշը, հարկաւ կ'իմանար Բիւզանդիոնի կայսերը, և կ'ակնարկէր անոնց դրօշի մենագրական խաչին, զոր միանգամայն կ'անուանէ «իշխանաց յոյս քաջութեան»։ ժանտաւանդ հայ ազատանդին՝ որ կը շարունակէր կոռիլ մի և նոյն դրօշին ներքեւ, ինչպէս տեսանք: Եւ ասոր նշանն էր զարգացեալ մենագիրը, մեր յառաջ բերածն իսկ, որ լաւագոյն ներկայա-



Ձև 5. — Դրօշ Պիծակ Սարգսի:

ցուցիչն էր խաչին, մինչև որ վերջնոյս հասարակ ձևին առջև տեղի տուաւ մեծ նազարի Ձ կամ է դարէն վերջին:

2. — Ինչ էր խաչադրօշին գոյնը: Յատկապէս յիշուած չէ, բայց և ոչ դժուարին գուշակել: Եթէ Հայք անոր զաղափարն ու նշանն ինքնին Բիւզանդիոնէն առին, հարկաւ զանց չըրին անոր յարակից պատշաճութիւնքն ալ, որոց զխաւսորն էր ծիրանին, գոյններու ազնուագոյնը և սպիտակներ թափառողաց, որ լաւանոյս կը յարմարէր երկնից Արքայի նշանին: Մանաւանդ որ՝ ինչպէս տեսանք՝ արտաքոյ մարտից արքունի դրօշ ալ էր այն մեր քով: Ուստի առաւելագոյն իրաւամբ արքունական գունով պէճեկի. իսկ նշանն՝ ոսկեով, ինչպէս էր ծոպն ալ նախկին դարերուն:

3. — Բարեբաստիկ դիպուածով մեր առջև դրած է խաչադրօշ մը Ս. Ղազարու մէջ գրչագիր անտարանը, ելած նշանաւոր Պիծակ Սարգսի վրձնէն 1831ին. այս ինքն Ռուբինեան հարստութեան անկմանէն կա-

նուի: Այլ ևս հին դրօշին ճշգրիտ պատկերը չէ այն. և զժախտաբար չափազանց փոքրիկ ալ է, որով և անկատար. և զոր նմանահանութեամբ յառաջ կը բերէ Հ. Ալիշան իւր Սիսուանի մէջ (235), բնագրին տարրամոլութիւնքն աւելի շեշտելով, մինչեւ կու տամ անոր աւելի մեծը (Ձև 5): Յայտնի է հոն տակաւին ծիրանեղջյն վարդ, սակայն բաժանուած կրկին մասանց. ներքինը՝ չորեքկուսի հաւասարակողմ, հին ձևն իսկ, որոյ վրայ կ'երևի հաւասարաթև կամ յոնակոն խաչը, ոսկեծիր կամ ոսկեղէն, յաջորդը նախկին մենագրին, և զրաւած է կտաւին մեծագոյն մասը: Իսկ իւր չորս թևոց միջոցներուն մէջ կան մի մի ոսկեգիր անորոշ զարդեր, զորս կը կարծեմ փրկական հայ մենագրերը, ՏԲ, ԱՅ, ՅԱ, ՔԱ, ծանօթց այն շրջանին պատարագի նշխարին խաչապատկերին մէջ ալ՝ նկարագրուած Գր. Տաթևացիէն¹, և 1323ի հայ տապանագրի մը վրայ ի Պիշպէս², ապացոյց՝ թէ լոկ եկեղեցւոյ յատուկ չէր. և որ միանգամայն է դրօշին իսկապէս հայացուցիչ, թէև ուրիշ ապացոյց չունեանք հաստատուն պայման մը նկատելու: զայս նաև աւելի երիցանքին դարերուն՝ իսկ կտաւին արտաքին կամ յաւելուածական մասն՝ առաջինն երկաթ, ըստ սովորութեան միջին դարու՝ սրանկեամբ ճեղքուած է երկու լեզուաց կամ տտանց՝ որ կը ծածանին հովէն: Այս վառը ճիզակի մը ծայրը կը գտնուի, և լայնութեամբը պրկուած է բնին. պարագայը՝ որ անոր քաղաքական դրօշի նկարագրը կ'ընծայեն (հմտ. Ձև 6): Եւ կը գտնուի աշտարակաձև շէնուածն մը վրայ, որ կը բարձրանայ Յովհ. Աւետարանչի կենդանագրին քով: Կը կրկնեմ՝ թէ նկարս իւր փոքրիկութեան մէջ ոչ նկարչին ունեցած իրական բնագրին կատարեալ թարգմանը նկատելի է, ոչ ալ մեզ անթերի և ապահով առաջնորդ մը. բայց զոհացուցիչ է գէթ

1. Քարոզիչ, հտ. ամբան, 158.

2. Հ. Յ. Տաշեան. Անթիքի մը հայ ճեղքարտեան վրայ, Վիեննա, 1898, էջ 152.

գլխաւոր մասանց մէջ. և այն՝ կը կրկնեմ՝ նկատմամբ միջնադարեան ձեռն:

4. — Ազգային դրօշիս խաչը միջին դարեան յունական էր ըսի. և որ մեր քով կ'երեւի սահմանափակ կամ շրջանակաւոր ձեւերու մէջ միայն, Մեր միջնադարեան հնութեանց վրայ աւելի յաճախ երեցողն է յատկեալաւ կոշուածը, որոյ ստորին թէն երկարագոյն է քան միւս երեքը՝ Սակայն ունէինք գրեթէ սեպհական ձեւ մ'ալ, վերին ու ստորին թեւերն իւրաքուհաւասար, և քան զխոստորնակներն երկար. Գրեթէ սեպհական՝ կ'ըսեմ, ըստ որում աւելի յաճախեալ էր մեր քով քան այլոց, և յաճախութիւնն հարկաւ արդիւնքն է դիւտաւորութեան մը: Տարիներ յառաջ հուն. զարահայ բարեկամս Յուլիոս Միրզայեան այս ձեւը նշմարելով Միւթարեանց տպագիր նշանի մը վրայ, հարցուց ինձ պատճառն և առիթ տուաւ զայն խուզարկելու հայ հնութեանց մէջ, Բախտաւոր եղալ գտնելու որոնածս՝ թէ երիցագոյն և թէ միջին դարերուն. զոր օրինակ՝ կ'երեւի այն Տեկորոյ նորակործան տաճարի ճակատին վրայ, հիմնարկութիւն Ե դարին, թէ և Հկարեանք ձեւն ալ ժամանակակից համարիլ հաստատապէս. կայ Տաթևոյ եկեղեցւոյն ճակատին՝ Թ դարէն (Սիսական, 225). Ի Ս. Ղազար պահուած 1248ի Չեռնադր. տետրակին լուսանցից մէջ՝ երկու անգամ. Խոռակերաց Ս. Նշանին վրայ՝ պահուած յէջմիածին, 1300 թուէն¹, և այլ զանազան տեղեր: Եւ որ աւելի ուշագրաւն է, նոյն ձեւով է վաղարշապատու Ս. Հոփսի սիմէի և Անուոյ Ս. Առաքելոց ներքին յատակաձեւն ալ, մին է և միւսը ԺԱ դարէն. Եթէ միւս խաչերուն քով փափաքելի էր հայկական խաչ մ'ալ ունենալ, մեզ չի պակսիր այդ. Ունինք հիմը, որոյ վրայ կը մնայ բարձրացնել շէնքը՝

(Շարունակելի) Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. Յունական կամ լատինական՝ ոչ ծիսի, այլ ձեւերու սահմանն է միայն, անխոր գործածուած երկուքն ալ արեւելք և արևմուտք:

2. Թորամանեան, Հայ ճարտարապետութիւն. Տփղիս, 1911, էջ 21.

3. Գեղարուեստ, Տփղիս, 1911.

4. Թորամանեան, Էյրմածնի Տաճարը, Տփղիս, 1910, էջ 16, 13.

ԱԼԻՇԱՆ ՈՒ ԲԱՅՅԻ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆՆ ԿԵՎ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՆՑԻՆՔ

ԱԼԻՇԱՆ

ԲԱՅՅԻ

Տեսարանը կը ներկայացնէ դայա մը՝ որուն եզերքն է զարդի ձամբան, արիւնտ, երկար, քաղուած՝ հեռաւոր անսահմանութեան վեր. Քաւնի մը դիպակներ հոս ու հոն կը հսկելին... Մայր մը կուրծքին սեղում իր տղան՝ կարծես կը քնանայ, մեռած, աչքերն երկնքին, ողբերգական: Հորիզոնը թոստագոյն է խորունկ ու մրագիւն:

Քանի մը ծանր ինկած են ձեղքուած, տեղաւորափ, դաշտին վրայ՝ ուր կարմրութիւն մը կը տիրէ վերջապոյսին խաղաղութեանը մէջ: Միտ տխրութիւն մը կը սաւառնի ամէն տեղ, մահուան արմատիքը մը տոկէ բանի վրայ, աշերակի սարսուռ մը...

Հեռաւոր կոյնակ մը կը հնչէ հեծկոտագին, մարած ու ողորմուկ զօղանքներով...

ԱԼԻՇԱՆ

(որ յանկարծ կ'երևայ ձամբուն եզերքը, տեւսիլքի մը պէս ձերմակ)

Ո՞վ կը կանչէ նորէն ինձի մարդկութեան...

(Իր շարքը նայելով տխրութեամբ ու մեղաւանդելով)

Դեռ ծրխալունչ աւերակ մ'ես Հայաստան... Նորէն կու գամ ողբալ ըզքեզ Հայրենիք, Ո՞վ դու, սքրտիս ու մանկութեանը քաղցրիկ Հին օրօրան, ահա՛ կու գամ վերստին, Մահուան ծոցէն արթննալով, մեծ վըշտին երգը բերել, ու բերիլ երգն արիւնտ... Ազատութեան ու վըրէժի ճամբուն մօտ Բուր ինկած հերոսներուն ի պատիւ... Անոնք եղան արշալոյսներ բազմաթիւ երկընթիւ մէջ, ո՞վ Հայաստան...

(հեռաւոր կոյնակը կը հնչէ)

Կը լըսեմ,

Գեղին ձայնն է, Յոյսին զարթոնքը վըստ Գիշերին մէջ, երբ ամէն բան կը մեռնի, Ո՞վ տաճարներ, ո՞վ խորաններ հայրենի, Ո՞վ արթթի լուսածղրիկ անկիւններ, երբ երկուսն ըստուերին մէջ հրեշտակներ կը թևածեն խուկնով, լոյսով արբեցած՝